



04.04.2014

Աշխատանքային այցով Երևանում գտնվող աշխարհահռչակ <<Սմիթսոնյան թանգարաններ>> հաստատության մի խումբ պատասխանատուներ՝ Արտաքին կապերի գրասենյակի գլխ. խորհրդական Հ. Բուբվինը, Ֆոլկ փառատոնի տնօրեն Ս. Լին Մոթլեյը, SOLOMAR կազմակերպության փոխնախագահ Ս. Ջոնսը

և Ամերիկյան հնդկացիների ազգային թանգարանի կրթական ծրագրերի տնօրենի օգնական Կ.Ռափկիկյանը, այսօր այցելել են <<Էրեբունի>> արգելոց-թանգարան և հանդիպում ունեցել արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանի հետ:

Թանգարանի մշտական ցուցադրությանը, ամրոցի միջնաբերդին և <<Պատանի հնագետ>> դպրոցի ուսումնական հնավայրին ծանոթանալուց հետո, հյուրերը հետաքրքրվել են արգելոց-թանգարանի առաջիկա վերականգնողական, կրթական և հանրությանը մատուցվող ծառայությունների բարելավման ծրագրերով, արգելոց-թանգարանի կառուցվածքային ստորաբաժանումներով և կադրերով:

Ուրարտական խոհանոցը վերականգնելու և հանրությանը ներկայացնելու Էրեբունի թանգարանի մտադրության համատեքստում հայազգի Կ. Ռափկիկյանը ներկայացրել է Ամերիկյան հնդկացիների ազգային թանգարանի մշակութային մի համանման ծրագրի մանրամասներ, որի շրջանակում այցելուին կարողանում է համտեսել և պատկերացում կազմել ոչ նյութական մշակույթի այդ կարևոր տարրերի մասին:

Սմիթսոնյան հաստատությունը գիտահետազոտական կառույց է, որը հիմնադրվել է 1846թ.՝ ամերիկյան կառավարության կողմից: Հաստատությունն ունի հրատարակչական, թանգարանագիտական, մանկավարժական և կրթական գործառույթներ: Այսօր Սմիթսոնյան ինտիտուտ անվամբ հայտնի հաստատությունը իր կառուցվածքում ներառում է 19

թանգարաններ, 9 գիտահետազոտական կենտրոններ, որոնք հիմնականում տեղակայված են Վաշինգտոնում և կառավարվում են հիմնադրի՝ Ամերիկյան դաշնային կառավարության կողմից: Այդ 19 թանգարանները տնօրինում են 142 մլն. թանգարանային առարկաների: Ինստիտուտը թողարկում է ամսագիր, որը ևս կոչվում է Սմիթսոնյան: Սմիթսոնյան հաստատության հիմնադրման մտահղացումը բրիտանացի գիտնական Ջեյմս Սմիթսոնին է, որի անունով էլ հաստատությունը կոչվում է:

Սմիթսոնյան ինստիտուտի կազմում ներառված թանգարաններից են՝ Աֆրիկյան արվեստի ազգային թանգարանը, Ամերիկյան արվեստի թանգարանը, Ազգային կենդանաբանական այգին, Ամերիկյան հնդկացիների թանգարանը, Դիզայնի ազգային թանգարանը և այլն: Ներկայումս հաստատության կողմից իրականացվող ամենամեծ ծրագիրը <<Կյանքի հանրագիտարան>> նախագիծն է՝ ուղղված կենսաբազմազանության խրախուսմանը: